

Հարցաշար
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
12-րդ դասարան – 180 րոպե

Ամենագո՛ր Տե՛ր, քեզնից չեմ ակնկալում հրաշքներ, պարզապես ուզում եմ ապրել առանց խաբկանքների, ունայն ու մտացածին պատրանքների:

Տո՛ւր ուժ և կորով՝ գորշ միապաղաղությունից ազատվելու համար ճիշտ ժամանակին անվհատ ու աննկուն կանգնեմ խրթին առեղծվածների և բացահայտումների առջև: Դուրս բերելով ինձ անտարբերության ճահճից՝ կյանքս կդարձնես գունագեղ ու փոթորկահույզ:

Սովորեցրո՛ւ ինձ փոքրիկ քայլերի արվեստը: Օժտի՛ր ժուժկալ լինելու հատկությամբ, որ **երբևէ չթոչեմ կամ չտողամ՝** չմոռանալով, սակայն, ճախրել բարձունքներում՝ արժևորելով վսեմն ու գեղեցիկը: Վանի՛ր քստմնելի ու զազիր մտքերը, որոնք իրենց ճանապարհին աղավաղում են, աղճատում ամեն լավ բան:

Զերծ պահելով միամիտ ու պատիր հավատից, թե կյանքն ընթանալու է անարգել, ես ունակ կլինեմ հասկանալու, որ ձախողումը կյանքի անքակտելի ու անխզելի բաղադրիչն է, որի շնորհիվ իմաստնանում ենք, դառնում ողջախոհ և շրջահայացած:

Հիշեցրո՛ւ ինձ, որ **հաճախ սիրտը վիճում է բանականության հետ:**

Քաջ գիտես, որ մարդը մշտապես կարիք ունի հավատարիմ մերձավորի: Թու՛յլ տուր արժանանալ ճակատագրի այդ նվերին՝ գնահատելով հազվագյուտ պարզեր: Թող ուղեկիցս լինի նա, ով չի վարանի ասելու անգամ ամենադաժան ճշմարտությունն առանց երկբայելու և դա կանի խանդաղատանքով, հոգածությամբ՝ չնսեմացնելով և չնվաստացնելով ինձ:

Խնդրում եմ, դարձրո՛ւ **ունակ թակելու այն դռները, որոնք ներքևում են:**

Փարատի՛ր այն վախը, որ կարող եմ ինչ-որ բան

Մի՛ տուր այն, ինչ խնդրում եմ ինձ համար, այլ այն

1. Ավարտի՛ր տեքստի վերջին երկու նախադասությունները: (1 միավոր)
2. Մեկնաբանի՛ր տեքստում ընդգծված մտքերը: (4 միավոր)
3. Տեքստից բառերից կազմի՛ր տասը հոմանիշ գույգ: (2 միավոր)
4. Գրի՛ր խրթին, մտացածին, ժուժկալ, շրջահայաց, հազվագյուտ բառերի մեկական հականիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (1 միավոր)
5. Տեքստից դո՛ւրս գրիր պակասավոր և անկանոն հինգ բայ: (1 միավոր)
6. Տեքստում ի՞նչ խոսքի մասի արժեքով են գործածված *համար, թող, սակայն, անգամ, այլ* բառերը: Գրի՛ր՝ ուրիշ ինչ խոսքիմասային արժեքներ ունեն: (2 միավոր)
7. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր *երգեր ձեռամբ* թևավոր խոսքը: Որտեղի՞ց է ծագում: (2 միավոր)
8. Բացատրի՛ր «Ռուբիկոնն անցնել» թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Մտորումներ ճանապարհից առաջ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)

Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի առաջադրանքների պատասխաններ

12-րդ դասարան

3. խաբկանք-պատրանք, երկբայել- տատամսել, արժևորել- գնահատել աղավաղում- աղճատում, քստմնելի- զազիր, ունայն-պատիր, անվհատ – աննկուն, նվեր-պարզև, ողջախոհ - շրջահայացած, ունակ- կարող, նսեմացնել- ստորացնել, վանել- փարատել, թռչել-ճախրել:
4. խրթին – պարզ, դյուրին, հասկանալի, հասարակ և այլն
մտացածին-իրական, առարկայական
ժուժկալ – անզուսպ, անհագ, ազահ, անկուշտ, աչքածակ, ընչաքաղց, չափը չիմացող
շրջահայացած- անխելք, անողջամիտ, անհեռատես և այլն
հազվագյուտ – սովորական,
5. անկանոն բայ – ունեմ, գիտեմ, լինել, ասել, բերել, դարձնել, տալ
6. *համար* –կապ / գոյական, *թող*- վերաբերական /բայ, *սակայն* – վերաբերական / շաղկապ, *անգամ*- վերաբերական /կապ, *այլ* - շաղկապ / դերանուն
7. երգում էր ձեռքերով- ասվում է գեղեցիկ, արտահայտիչ պարի մասին, ծագումը, Խորենացու«Հայոց պատմությունից»։Խնջույքի ժամանակ Տրդատը մի կնոջ (Նազենիկին) տեսավ, որ չափազանց գեղեցիկ էր և ձեռքերով երգում էր:
8. Ռուբիկոնն անցնել- վճռական, աննահանջ քայլ կատարել, ծագումը՝ Կեսարը Գալլիան գրավելուց հետո մոտեցել էր Գալլիան բուն Իտալիայից բաժանող Ռուբիկոն գետակին, որն հենց այնպես անցնելու իրավունք չուներ: Երկար մտմտալուց հետո ասաց՝ վիճակը զգված է ու անցավ:

Գնահատման չափանիշներ

12-րդ դասարան

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 1 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: